

**«Ուսումնական օրացույցը՝ որպես արդի գրադարանավարի  
աշխատանքային գործիք»**

*Ուսանող՝ Անահիտ Մոսինյան  
Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան*

Գրախոս՝ Թամար Ղահրամանյան

Անահիտ Մոսինյանի «Ուսումնական օրացույցը որպես արդի գրադարանավարի աշխատանքային գործիք» դիպլոմային աշխատանքը խնամքով, բարեխղճությամբ գրված աշխատանք է: Հեղինակը ըստ արժանվույն ուսումնասիրել է դիպլոմային աշխատանքի թեման: Աշխատանքի 1-ին գլուխը տեսական շարադրանք է՝ գրադարանավարի աշխատանքի պատմական ակնարկ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առանձնակիորեն հետաքրքիր է աշխատանքի 2-րդ գլուխը, որում Անահիտը փորձել է ներկայացնել Քարինջ գյուղի միջնակարգ դպրոցի գրադարանավարի իր աշխատանքը, աշխատանք, որն իր մեջ թարմ, նոր, հետաքրքիր մոտեցումներ է պարունակում, որը գուցե նորություն չէ մեր կրթահամալիրի գրադարանավարի համար, բայց իսկապես նորարարություն է Լոռու մարզի հեռավոր գյուղերից մեկում՝ Քարինջում աշխատող գրադարանավարի համար: Անահիտը հանգամանալից ներկայացնում է իր աշխատանքային օրացույցի նմուշը՝ որպես աշխատանքային գործիք, ապա նաև աշխատանքային պլանի նմուշը իր աշխատանքի կազմակերպման ձևով և բովանդակությամբ, ինչպես նաև անհատական բլոգը: Վստահ եմ, որ Անահիտ Մոսինյանը կրթահամալիրում ստացած իր կրթությամբ և բարեխիղճ աշխատանքով արդեն ներառվել է գրադարանների վերածննդի գործընթացին: